«Ա. Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ
Общественная организация “Армянский центр защиты прав человека им. А.Д.Сахарова”
“ The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre„ Non governmental organization

ՀՀ, 0009 ԵՐԵՎԱՆ, Սարմենի 1 1 Sarmen St., 0009 YEREVAN, ARMENIA РА, 0009 ЕРЕВАН, ул. Сармена 1
(37410) 54-29-36, 58-78-64, 56-15-05 Fax: (37410) 561505 e-mail: sakhfd@arminco.com , www.sakharovcentre.org

10 նոյեմբերի, 2010թ. **Ե-1791**

ՀՀ ԱԺ ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան,

Ծանոթանալով ՀՀ ընտրական օրենսգրքի նախագծին, այդ թվում համադրելով ընթացակարգային նորմերը որոշակի գործոնների հետ, որոնք նպաստում են ընտրությունների արդյունքները կեղծելուն, նպատակահարմար ենք գտնում Ձեզ ներկայացնել մեր կազմակերպության դիտողություններն ու առաջարկություններն այդ նախագծի վերաբերյալ:

1. Ընտրական շտաբների կազմավորումը.

Ընտրական գործընթացի ժամանակ թեկնածուի, կուսակցության (կուսակցության դաշինքի) նախընտրական քարոզարշավը կազմակերպում և ղեկավարում են ընտրական շտաբները:

Նոր ընտրական օրենսգրքի նախագծում չկան նորմեր, որոնք կարգավորում են ընտրական շտաբների կազմավորման ու գործունեության կարգը: Այդ հոդվածների բացակայության հետևանքով հաճախ ընտրական շտաբների կազմում ընդգրկվում են մարդիկ, ովքեր ունեն “թաղային և քրեական հեղինակություն” և բացասական ազդեցություն են թողնում հասարակության լայն շերտերի վրա: Նրանք, որպես կանոն, ներգրավվում են ընտրական գործընթացներում ընտրողների շրջանում վախի մթնոլորտ ստեղծելու նպատակով և հիմնականում նրանց գործունեությունը դուրս է մնում իրավապահ մարմինների ուշադրությունից:

Այդ ազդեցությունը բացառելու նպատակով առաջարկում ենք.

1.1. ՀՀ ընտրական օրենսգիրքը լրացնել “ընտրական շտաբ” տերմինով ու նրա սահմանմամբ՝ որպես նախընտրական քարոզչության հիմնական դերակատարի:

1.2. Սահմանել ընտրական շտաբների կազմավորման ու գործունեության վերաբերյալ նորմեր, որոնցում հստակ կամրագրվեն նախընտրական քարոզարշավի կազմակերպմանն ու ղեկավարմանը մասնակցող անձանց շրջանակը, արգելելով նրանց թվում ընդգրկվել “թաղային և քրեական հեղինակություն” ունեցող անձանց:

2. Ընտրությունների ընթացքում սոցիալական, հումանիտար աջակցությունը.

ՀՀ ընտրական օրենսգրքի նախագծի 18-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերում ամրագրված է.

“6.Նախընտրական քարոզչության ժամանակ թեկնածուներին, կուսակցություններին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ:

7. Թեկնածուները, կուսակցությունները պարտավոր են պահպանել նախընտրական քարոզչության կազմակերպման սահմանված կարգը: Ընտրական հանձնաժողովները հսկում են նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանումը: Այդ կարգի խախտման դեպքում թեկնածուին, կուսակցության ընտրական ցուցակը գրանցած հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ՝ դրանք կանխելու կամ կիրառում նախազգուշացում խախտում թույլ տված թեկնածուի, կուսակցության նկատմամբ՝ տալով եռօրյա ժամկետ խախտումը վերացնելու համար: Նշված ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար”:

Ընտրությունների անցկացման փորձը ցույց է տալիս, որ ընտրությունների ժամանակ միշտ եղել և մնում է կիրառելի թեկնածուների կամ կուսակցությունների օգտին ձայներ հավաքելու ակնկալիքով տարբեր մարմինների կողմից տրամադրվող սոցիալական, հումանիտար աջակցությունը: Այսինքն ՀՀ ընտրական օրենսգրքի վերոնշյալ նորմերը չեն կիրառվում և կրում են սոսկ դեկլարատիվ բնույթ:

Գտնում ենք, որ ընտրական հանձնաժողովների և իրավապահ մարմինների համագործակցությունը, վերոնշյալ խնդրի կապակցությամբ, թույլ է: Առաջարկում ենք ստեղծել ընթացակարգային նորմեր, որոնք կամրապնդեն համագործակցությունը իրավապահ մարմինների և ընտրական հանձնաժողովների միջև, վերոնշյալ գործունեության դեմ պայքարում:

3. Ստուգումների իրականացումն ընտրությունների ժամանակ.

Գործնականում ընտրությունների ընթացքում օգտագործվում են վարչական ռեսուրսներ, տնտեսվարող սուբյեկտների գործունեության նկատմամբ ստուգումներ (հարկային, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ և այլն) անցկացնելու միջոցով դրանց աշխատակիցների ձայները այս կամ այն թեկնածուի օգտին տալու համար:

Առաջարկում ենք.

3.1. Սահմանափակել ընտրությունների անցկացման ժամանակ համապատասխան մարմինների կողմից իրականացվող ստուգումների կազմակերպումը և անցկացումը:

3.2. Ստուգումներն իրականացնել քվեարկության հաջորդ օրվանից սկսած, բացառությամբ քրեական գործի շրջանակներում իրականացվող ստուգումների:

4. Քվեարկության օրը ընտրողներին տեղամասային կենտրոն տեղափոխելու մասին.

Ընտրարշավներ անցկացնելու փորձը ցույց է տալիս, որ քվեարկության օրը թեկնածուները սեփական միջոցների հաշվին իրականացնում են ընտրողների տեղափոխումը դեպի տեղամասային կենտրոններ, որի ընթացքում իրականացնում են քարոզչություն:

Օրենսդրության մեջ լրացում կատարելու միջոցով առաջարկում ենք.

4.1. Տարածքային ընտրական հանձնաժողովների տրամադրության տակ դնել համապատասխան տրանսպորտային միջոցներ, որոնք հանձնաժողովների կողմից մշակված գրաֆիկով և երթուղով կկազմակերպեն ընտրողների տեղափոխումը դեպի տեղամասային կենտրոններ:

4.2. Տրամադրվի այդ ծառայությունը հիմնականում ծերերին, հիվանդներին և այն անձանց, ովքեր այս կամ այն պատճառներով ինքնուրույն դժվարանում են հասնել տեղամասային կենտրոն:

5. Տեղամասային կենտրոններ կազմավորելու մասին.

Երևան քաղաքում ընտրությունների անցկացման փորձը ցույց է տալիս, որ տեղամասային կենտրոնների ճնշող մեծամասնությունում գոյանում են ընտրողների հերթեր, որից օգտվում են որոշ թեկնածուներ, կուսակցություններ կամ կուսակցությունների դաշինքներ քվեարկության օրը լրացուցիչ քարոզչություն իրականացնելու համար: Հերթերի գոյացումը որպես կանոն կախված է ընտրողների քանակից և տեղամասային կենտրոնների ոչ բավարար պայմաններից: Ավելին, լինում են դեպքեր, երբ միևնույն շենքի ներսում ստեղծվում են մի քանի տեղամասային կենտրոններ (օրինակ՝ ք. Երևանում 2 տեղամասային կենտրոն կազմավորվում է Գրողների տան շենքում):

Առաջարկում ենք.

5.2. ՀՀ ընտրական օրենսգրքի նախագծի 14-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված դրույթը այն մասին, որ ընտրական տեղամասն ընդգրկում է 2000 ընտրող, փոխել:

5.3. Պակասեցնել մեկ տեղամասում ընդգրկված ընտրողների թիվը, ավելացնելով ընտրական տեղամասերի քանակը:

5.4. Բացառել մեկից ավել տեղամասային կենտրոնների կազմավորումը մեկ շենքի ներսում:

6. Զանգվածային լրատվամիջոցների լիազորությունները քվեարկության ընթացքում.

Որոշ զանգվածային լրատվամիջոցներ քվեարկության օրը, ճեպազրույցի պատրվակով տեղամասային կենտրոնից դուրս իրականացնում են քարոզչություն այս կամ այն թեկնածուի, կուսակցության կամ կուսակցության դաշինքի օգտին:

Առաջարկում ենք իրավապահ մարմիններին օրենքով վերապահել լրացուցիչ լիազորություններ՝ զանգվածային լրատվամիջոցների կողմից նման գործունեությունը բացառելու նպատակով:

7. Նախընտրական հիմնադրամների վերաբերյալ.

Հայտարարագիրը, որը ներկայացվում է թեկնածուի, կուսակցության կամ կուսակցության դաշինքի կողմից, որտեղ նշվում են նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ տվյալներ, շատ դեպքերում չի համապատասխանում իրականությանը: Նախընտրական քարոզարշավի ժամանակ ծախսվում են ավելի շատ միջոցներ քան նախատեսվում են հայտարարագրերով:

Առաջարկում ենք ստեղծել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից անկախ վերլուծական կենտրոն, որը համապատասխան մասնագետների ու փորձագետների միջոցով կգնահատի թեկնածուների, կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամ կատարվող ֆինանսական մուտքերի և ծախսերի հարաբերակցությունը:

8. Ընտրական հանձնաժողովների անդամների համապատասխանության վերաբերյալ.

Ընտրական հանձնաժողովների անդամների համար նախատեսվում են կրթական մակարդակին վերաբերվող որոշակի ցենզեր:

Առաջարկում ենք.

8.1. Հանձնաժողովի անդամների համար սահմանել նաև էթիկայի նորմեր (կանոններ), որոնցով կղեկավարվեն նրանք:

8.2. Ստուգել հանձնաժողովների անդամների գիտելիքները ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջները խախտելու համար նախատեսվող պատասխանատվության վերաբերյալ:

9. Ընտրական օրենսգրքի դրույթների խախտման համար նախատեսվող պատիժների վերաբերյալ:

Blank foundation

Առաջարկում ենք.

9.1. ՀՀ ընտրական օրենսգրքում կատարել լրացում, որում կամրագրվի, որ ընտրական օրենսգրքի ցանկացած դրույթ խախտելու համար կառաջացնի քրեական պատասխանատվություն: Ընտրական գործընթացների կարևորությունը հաշվի առնելով ՀՀ ընտրական օրենսգրքի նորմերի խախտումների համար անհրաժեշտ է նախատեսել միայն քրեական պատասխանատվություն:

9.2. Լրացումներ կատարել նաև ՀՀ քրեական օրենսգրքում՝ նախատեսելով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկում որոշակի ժամկետով, որպես լրացուցիչ պատիժ:

9.3. ՀՀ ընտրական օրենսգրքի նորմերի խախտումների համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսվող արարքները համարել որպես ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ և փոխել դրանց սանկցիաներում նախատեսված պատիժների չափը: Միևնույն ժամանակ առաջարկում ենք սույն նախագիծը քննարկել ՀՀ քրեական և ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերով նախատեսված համապատասխան դրույթների հետ միասին: Վերջիններս համապատասխանեցնել մեկը մյուսին:

9.4. ՀՀ քրեական օրենսգրքով սահմանել պատասխանատվություն ընտրական հանձնաժողովների անդամների կողմից իրենց լիազորությունները ոչ պատշաճ կատարելու համար:

Հարգանքով՝

ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ
Տնօրեն

Blank foundation